ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 18.02.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱԿՈԲ ՌՈԲԵՐՏԻ ՃԱՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 25091-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**) Թամարա Բաղդասարյանի՝ նախագահությամբ, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Պավել Գյուլումյանի, Դավիթ Մելքոնյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25091-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Փաստաբան Կարեն Հովհաննիսյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ հանդիսացել է թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը: Նշված գործով 30.06.2025թ. դատարանի վճռով Դիմողի ներկայացրած հայցը բավարարվել է:

Դիմողը հայտնել է, որ հակառակ կողմի փաստաբան Հակոբ Ճարոյանը 08.10.2025թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի կապակցությամբ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Ըստ Դիմողի՝ ի պատասխան առարկությունների, հակառակ կողմի փաստաբան Հակոբ Ճարոյանը ներկայացրել է «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթ, որտեղ բազմաթիվ վիրավորական արտահայտություններ են կատարվել Դիմողի վերաբերյալ, մասնավորապես.

1. «Հայցվորի ներկայացուցիչը սպում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան. Դատարան դիմելը Հայցվորի ներկայացուցչի մոտ բնավորություն է, որի հիմնավորումը հետևյալն է...:

2. Գուցե «համարձակ իրեն հայտնի ճշմարիտ տեղեկություններ հայտնող, գիտելիքներ, փորձառություն և պրոֆեսիոնալիզմ» ունեցող Հայցվորի ներկայացուցիչը կանդրադառնա վերաքննիչ բողոքին նաև բովանդակային առումով, հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով:»:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Հակոբ Ճարոյանին ենթարկել պատասխանատվության:

Փաստաբան Հակոբ Ճարոյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) ներկայացրել է թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դիմողի վերաքննիչ բողոքի պատասխանը, որը հիմք է հանդիսացել Փաստաբանի կողմից դիրքորոշումը գրելու համար:

Փաստաբանը 09.02.2026թ., 10.02.2026թ., 11.02.2026թ. և 18.02.2026թ., բացատրություններ է ներկայացրել, որոնց ընդհանուր տրամաբանությունից ակնհայտ է դառնում, որ Փաստաբանն իր կողմից դատարան ներկայացված դիրքորոշման մեջ օգտագործած ձևակերումներն առավելապես կապում է Դիմողի վերաքննիչ բողոքի պատասխանում արտահայտած կարծիքների հետ: Այսինքն, Փաստաբանի պնդմամբ, իր վարքագծի դրսևորումը պայմանավորված է եղել Դիմողի «սադրիչ» վարքագծով:

Փաստաբանը, թե՛ բացատրությունների մեջ «Հիմնավորումներ» վերտառությամբ բաժնում և թե՛ կարգապահական նիստի ընթացքում անդրադարձել է իր կատարած ձևակերպումների բացատրություններին:

Պալատի նախագահի 13.11.2025թ. թիվ 325-Ա/ԿԳ-25091 որոշմամբ փաստաբան Հակոբ Ճարոյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1-րդ ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական

հանձնաժողովը (**այսուհետև նաև՝ Հանձնաժողով**), 18.02.2026թ. քննության առնելով փաստաբան Հակոբ Ռոբերտի Ճարոյանի (արտոնագիր՝ թիվ 1474) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, որոշել է վերջինիս նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2 րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման համար:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի</u>** <u>18.02.2026 **թվականի թիվ ԿԳ**-25091 **որոշման էությունը**.</u>

Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է, որ Փաստաբանի 13.10.2025թ. դատարան ներկայացրած դիրքորոշմամբ, մասնավորապես՝ դրանում օգտագործված «հայցվորի ներկայացուցիչը մեծամիտ և փուչ անձնավորություն է», «իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ» արտահայտություններով Դիմողի նկատմամբ դրսևորել է անհարգալից վարքագիծ:

Դատարան ներկայացված փաստաթղթում օգտագործված ձևակերպումները, որոնցում հակառակ կողմի ներկայացուցիչը բնութագրվել է որպես «մեծամիտ և փուչ անձնավորություն» և նրան վերագրվել է «անգրագիտություն», իրենց էությամբ անձնական բնույթի գնահատականներ են: Դրանք չեն հանդիսանում իրավական փաստարկ և չեն նպաստում գործի հանգամանքների պարզաբանմանը: Ընդհակառակը՝ նման արտահայտությունները դուրս են մասնագիտական բանավեճի թույլատրելի սահմաններից և ուղղված են անձի արժանապատվության նսեմացմանը: Մասնավորապես, «ստում է» ձևակերպումը, երբ չի ներկայացվում գիտակցաբար կեղծ տեղեկություն հաղորդելու բավարար հիմնավորում, դուրս է պրոֆեսիոնալ բանավեճի սահմաններից, «մեծամիտ», «փուչ անձնավորություն», «անգրագիտությունը փորձում է թաքցնել» ձևակերպումները վերաբերում են ոչ թե փաստարկներին, այլ անձին, հետևաբար դրանք չեն կարող դիտվել որպես դատավարական պաշտպանության ընդունելի միջոց:

Հանձնաժողովը գտել է, **որ Փաստաբանի վարքագծում առկա են** 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 2-**րդ կետի**, **ինչպես նաև Կանոնագրքի** 4.1 **ենթակետի խախտման պահանջների խախտման հատկանիշները**:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերները Հանձնաժողովի որոշման դեմ 14.04.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք:

Բողոքաբերը նշել է, որ 18.02.2026թ., ժամը 18:30-ին հրավիրված նիստի ընթացքում ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ներկայացրել է հիմնավորումներ առ այն, որ իր կողմից կազմված և փաստաբան Կ. Հովհաննիսյանի դիմումի հիմքում դրված «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթը փաստաբան Կ. Հովհաննիսյանի վերաբերյալ որևէ վիրավորանք չի պարունակում, սակայն Կարգապահական հանձնաժողովի կողմից իր նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

Ըստ Փաստաբանի՝ Որոշումից պարզ է դառնում, որ ինքը կարգապահական տույժի է ենթարկվել այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթում վիրավորել է փաստաբան Կարեն Հովհաննիսյանին:

Փաստաբանը գտնում է, որ վիրավորանքի առկայությունը հնարավոր է պարզել միայն փորձագետների կամ մասնագետների կողմից կազմված եզրակացության միջոցով:

Բողոքին կից ներկայացվել է «Մասնագիտական եզրակացություն» անվանումով փաստաթուղթ:

Բողոքաբերը խնդրել է վերացնել Հանձնաժողովի որոշումը:

4. **<u>Դիմողի համառոտ դիրքորոշումը</u>**.

Դիմողից բացատրություն չի պահանջվել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանը թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով հանդիսանում է պատասխանողի ներկայացուցիչը, իսկ Դիմողը՝ հայցվորի: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված փաստաթղթերով:*
2. «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթում Հակոբ Ճարոյանի կողմից կատարվել են հետևյալ արտահայտությունները.

- «Հայցվորի ներկայացուցիչը ստում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան. Դատարան դիմելը Հայցվորի ներկայացուցչի մոտ բնավորություն է, որի հիմնավորումը հետևյալն է...:

- Գուցե «համարձակ իրեն հայտնի ճշմարիտ տեղեկություններ հայտնող, գիտելիքներ, փորձառություն և պրոֆեսիոնալիզմ» ունեցող Հայցվորի ներկայացուցիչը կանդրադառնա վերաքննիչ բողոքին նաև բովանդակային առումով, հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ

գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով:»: Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված՝ Փաստաբանի կողմից կազմված «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթով:

3. «Մասնագիտական եզրակացություն» անվանումով փաստաթուղթը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի որոշումը կայացվելուց հետո:

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում****:*

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, Հանձնաժողովի որոշումը, կարգապահական գործի նյութերը, գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 2-**րդ կետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 4.1-**ին կետի համաձայն՝** *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Նշված կարգավորումից հետևում է, որ փաստաբանի կողմից առարկություններ ներկայացնելու իրավունքը, հակառակ կողմի դիրքորոշումը քննադատելու կամ վստահորդի շահերը հետևողական պաշտպանելու հնարավորությունը չեն ազատում

փաստաբանին մասնագիտական կոռեկտության, զսպվածության և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունից:

Փաստաբանը կարող է վիճարկել հակառակ կողմի փաստարկները, նշել դրանց անհիմն, հակասական, ոչ իրավաչափ կամ ապացույցներով չհաստատված լինելը, սակայն այդ քննադատությունը պետք է ուղղված լինի փաստարկին, դատավարական գործողությանը կամ իրավական դիրքորոշմանը, այլ ոչ թե հակառակ կողմի ներկայացուցչի անձին, մասնագիտական կարողություններին կամ անձնական հատկանիշներին:

Սույն գործով հաստատված է և Բողոքաբերի կողմից չի վիճարկվել, որ փաստաբան Հակոբ Ճարոյանը 13.10.2025թ. Վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթում օգտագործել է, մասնավորապես, հետևյալ ձևակերպումները.

1. «Հայցվորի ներկայացուցիչը ստում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան…»,

2. «…հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով»:

Խորհուրդն արձանագրում է, որ նշված ձևակերպումները դատարան ներկայացված դատավարական փաստաթղթում չեն ծառայում իրավական փաստարկի ներկայացմանը և չեն նպաստում վերաքննիչ բողոքի պատասխանի իրավական կամ փաստական հիմնավորումների հերքմանը: «Մեծամիտ և փուչ անձնավորություն», «իր անգրագիտությունը փորձում է թաքցնել» ձևակերպումները վերաբերում են ոչ թե հակառակ կողմի ներկայացրած դատավարական փաստաթղթի իրավական բովանդակությանը, այլ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի անձին և մասնագիտական որակներին: Դրանք իրենց բնույթով անձնական գնահատականներ են և դուրս են փաստաբանական մասնագիտական բանավեճի թույլատրելի սահմաններից:

Նույն կերպ, «ստում է» ձևակերպումը, երբ ներկայացվում է ոչ թե որպես կոնկրետ փաստով հիմնավորված իրավական դիրքորոշում՝ գիտակցաբար կեղծ տեղեկություն հաղորդելու վերաբերյալ, այլ որպես հակառակ կողմի ներկայացուցչին ուղղված ընդհանուր գնահատական՝ հանդիսանալով որպես անձին ուղղված անհարգալից ձևակերպում:

Խորհուրդը կարևորում է, որ փաստաբանը դատավարական փաստաթղթում կարող է օգտագործել այլ՝ իրավական առումով ընդունելի ձևակերպումներ, օրինակ՝ «նշված պնդումը չի համապատասխանում գործի փաստերին», «հակառակ կողմի ներկայացուցիչը

ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություն», «պնդումը հերքվում է գործի նյութերով», «դիրքորոշումը հիմնազուրկ է» և այլն: Մինչդեռ Բողոքաբերի կողմից ընտրվել են անձին ուղղված և մասնագիտական արժեզրկման երանգ ունեցող ձևակերպումներ: Ավելին, Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի այն պնդումից, թե իր կողմից օգտագործված ձևակերպումները պայմանավորված են եղել վերաքննիչ բողոքի պատասխանի բովանդակությամբ, անուղղակիորեն հետևում է, որ այդ ձևակերպումները չեն եղել բացառապես գործի իրավական կամ փաստական հանգամանքների պարզաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի խոսքի ազատությունը և դատավարական դիրքորոշում արտահայտելու իրավունքը չի ներառում դատարան ներկայացված փաստաթղթում հակառակ կողմի ներկայացուցչին «մեծամիտ», «փուչ», «անգրագիտությունը թաքցնող» բնութագրելու թույլտվություն: Նման արտահայտությունները չեն հանդիսանում վստահորդի շահերի պաշտպանության անհրաժեշտ և համաչափ միջոց:

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ փաստաբանի խոսքի ազատության և այդ խոսքի թույլատրելի սահմանների վերաբերյալ ձևավորած մոտեցմանը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում փաստաբանի խոսքի ազատությունը դիտարկվում է որպես վստահորդի արդյունավետ պաշտպանության կարևոր երաշխիք: Միաժամանակ այդ ազատությունը չի կրում բացարձակ բնույթ: Փաստաբանը, լինելով արդարադատության իրականացման համակարգի անմիջական մասնակից, օգտվում է մասնագիտական խոսքի որոշակի լայնությունից, սակայն պարտավոր է պահպանել մասնագիտության արժանապատվությունը, արդարադատության պատշաճ իրականացման շահը և դատավարության մասնակիցների իրավունքները:

Rodriguez Ravelo v. Spain գործով Եվրոպական դատարանը քննարկել է փաստաբանի կողմից դատավարական գրավոր փաստաթղթում օգտագործված կոշտ արտահայտությունների հարցը: Այդ գործով Եվրոպական դատարանը, մի կողմից, արձանագրել է, որ փաստաբանի վարքագիծը դրսևորել է հարգանքի պակաս դատավորի և անուղղակիորեն՝ արդարադատության համակարգի նկատմամբ, քանի որ փաստաբանը դատավորի վերաբերյալ ներկայացրել էր գնահատողական դատողություններ և նրան վերագրել մեղադրելի վարքագիծ: Եվրոպական դատարանը նշել է, որ նման վարքագիծը փաստաբանի կողմից դրսևորվելու դեպքում սկզբունքորեն կարող է ենթարկվել պատասխանատվության:

Մյուս կողմից՝ Եվրոպական դատարանը տվյալ գործով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի

խախտում է արձանագրել ոչ թե այն պատճառով, որ փաստաբանի նման արտահայտությունները առհասարակ ենթակա չէին գնահատման կամ պատասխանատվության, այլ այն պատճառով, որ կիրառված միջամտությունը՝ քրեական դատապարտումը և ազատությունից զրկման ռիսկ պարունակող պատիժը, համարվել է անհամաչափ: Եվրոպական դատարանը հատկապես հաշվի է առել, որ արտահայտությունները թեև եղել են լուրջ և ոչ քաղաքավարի, սակայն դրանք կատարվել են գրավոր դատավարական փաստաթղթում, հայտնի են եղել միայն դատավորին և կողմերին, հիմնականում վերաբերել են դատավորի կողմից գործի վարման եղանակին և ներկայացվել են վստահորդի շահերի պաշտպանության համատեքստում:

Հետևաբար, Rodriguez Ravelo v. Spain գործից բխող չափանիշն այն չէ, որ փաստաբանը դատավարական փաստաթղթում կարող է օգտագործել ցանկացած անձնական կամ արժեզրկող արտահայտություն: Ընդհակառակը, այդ գործը հաստատում է, որ փաստաբանի խոսքի գնահատման ժամանակ պետք է հավասարակշռել, մի կողմից, վստահորդի արդյունավետ պաշտպանության և փաստաբանի խոսքի ազատության շահը, իսկ մյուս կողմից՝ արդարադատության պատշաճ իրականացման, մասնագիտության արժանապատվության և դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության շահը:

Այդ հավասարակշռությունը գնահատելիս նշանակություն ունեն, մասնավորապես, հետևյալ հանգամանքները՝ արտահայտությունների կապը գործի փաստերի և իրավական հարցերի հետ, դրանց անհրաժեշտությունը վստահորդի պաշտպանության համար, արտահայտությունների հասցեատերը և տարածման շրջանակը, դրանց անձնական բնույթը կամ դրա բացակայությունը, ինչպես նաև կիրառված պատասխանատվության բնույթն ու խստությունը:

Սույն գործի հանգամանքների նկատմամբ նշված չափանիշները կիրառելով՝ Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի կողմից օգտագործված «մեծամիտ և փուչ անձնավորություն», «իր անգրագիտությունը փորձում է թաքցնել» ձևակերպումները չեն վերաբերում հակառակ կողմի ներկայացրած իրավական փաստարկների բովանդակությանը, գործի փաստական հանգամանքներին կամ դատավարական դիրքորոշման իրավաչափ քննադատությանը: Դրանք ուղղված են հակառակ կողմի ներկայացուցչի անձին և մասնագիտական որակներին:

Այսպիսի արտահայտությունները չեն հանդիսանում վստահորդի շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոց և չեն նպաստում դատարանի կողմից գործի փաստական կամ իրավական հանգամանքների պարզաբանմանը: Դրանք դուրս են գալիս այն լայնությունից, որը Եվրոպական դատարանի նախադեպային մոտեցմամբ կարող է վերապահվել փաստաբանին դատավարական պաշտպանության շրջանակում: Ավելին,

սույն դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե փաստաբանի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառմանը կամ ազատությունից զրկման ռիսկ պարունակող պատժի նշանակմանը, այլ փաստաբանի մասնագիտական վարքագծի կարգապահական գնահատմանը՝ փաստաբանական էթիկայի կանոնների պահպանման տեսանկյունից: Ուստի Rodriguez Ravelo v. Spain գործով Եվրոպական դատարանի կողմից ընդգծված «զսպող ազդեցության» վտանգը սույն գործի հանգամանքներում նույն կերպ չի դրսևորվում:

Այսպիսով, Եվրոպական դատարանի վերոհիշյալ մոտեցումները ևս հաստատում են, որ փաստաբանի խոսքի ազատությունը պաշտպանում է իրավական, փաստական և պաշտպանական անհրաժեշտությամբ պայմանավորված քննադատությունը, սակայն չի պաշտպանում այնպիսի ձևակերպումներ, որոնք դատավարական փաստաթղթում ուղղված են ոչ թե փաստարկին կամ վարքագծին, այլ անձի անհատական և մասնագիտական արժեզրկմանը:

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նախկինում արտահայտած մոտեցումներին՝ փաստաբանի արտահայտվելու ազատության և մասնագիտական վարքագծի թույլատրելի սահմանների վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը նախկին որոշումներում արձանագրել է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկվի որպես օրենքով նախատեսված սահմանափակում: Խորհուրդը, հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային մոտեցումներին, արձանագրել է, որ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:

Խորհուրդը կարևորել է նաև փաստաբանության՝ որպես մասնագիտական միավորման հեղինակության պաշտպանությունը՝ արձանագրելով, որ Պալատի խնդիրներից է «բարձր պահել բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը»: Խորհուրդը նաև վկայակոչել է Եվրոպական դատարանի այն մոտեցումը, ըստ որի՝ փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով, որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում, և հենց այդ կարգավիճակով են բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ կիրառվող սահմանափակումները:

Խորհուրդը նաև ընդգծել է, որ փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի

մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, ինչպես նաև փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության կարևորությամբ: Օրինակ՝ Խորհուրդն իր նախկին որոշումներից մեկում նշել է հետևյալը. *«Խորհուրդը դատարանին ուղղված փաստաթղթում օգտագործված «հիվանդ երևակայության արդյունք» արտահայտությունը գնահատել է որպես ոչ պատշաճ և փաստաբանին ոչ հարիր որակում՝ արձանագրելով, որ այն չի կարող համարվել դատավարության մասնակցի նկատմամբ հարգալից վերաբերմունք:»:* (տես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի ԿԳ-62-Ա կարգապահական գործով 02.02.2021թ. որոշումը):

Սույն գործի հանգամանքների հետ համադրելով Խորհրդի վերոհիշյալ դիրքորոշումները՝ Խորհուրդը գտնում է, որ նույն մոտեցումը կիրառելի է նաև տվյալ դեպքում: Եթե նախկին որոշմամբ դատարանին ներկայացված փաստաթղթում գործի մասնակցի պնդումները «հիվանդ երևակայության արդյունք» որակելը դիտվել է որպես փաստաբանին ոչ հարիր և դատավարության մասնակցի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, ապա սույն գործով դատարան ներկայացված փաստաթղթում հակառակ կողմի ներկայացուցչին «մեծամիտ և փուչ անձնավորություն» անվանելու, ինչպես նաև նրան «անգրագիտությունը թաքցնելու» վարքագիծ վերագրելու ձևակերպումները ևս ակնհայտորեն դուրս են փաստաբանական մասնագիտական բանավեճի թույլատրելի սահմաններից:

Խորհուրդը կարևորում է նաև ԿԳ/62-Ա որոշմամբ արտահայտված այն մոտեցումը, որ գրավոր խոսքն, ի տարբերություն բանավոր խոսքի, փաստաբանի կողմից առավել կառավարելի է: Դատարան ներկայացվող դատավարական փաստաթուղթը կազմվում է նախապես, փաստաբանը հնարավորություն ունի ընտրելու իրավական և մասնագիտական պատշաճ ձևակերպումներ, վերանայելու օգտագործվող բառապաշարը և խուսափելու անձին ուղղված գնահատականներից:

Այսպիսով, Խորհուրդը, կարևորելով Կանոնագրքի 4.1 կետի միատեսակ կիրառման անհրաժեշտությունը, արձանագրում է, որ փաստաբանի քննադատությունը պետք է ուղղված լինի փաստարկին, ապացույցին, դատավարական գործողությանը կամ իրավական դիրքորոշմանը, այլ ոչ թե անձի արժանապատվությանը կամ մասնագիտական որակներին:

Անդրադառնալով բողոքին կից ներկայացված «Մասնագիտական եզրակացություն» վերտառությամբ փաստաթղթին, հարկ է նշել հետևյալը.

Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ (4) սպասարկող անձնակազմի աշխատակիցն իրավունք ունի փաստաբանից կամ կարգապահական խախտման մասին հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձից

(մարմնից) պահանջելու ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որոնք տվյալ անձանց (մարմինների) ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն: Ապացույց ներկայացնելու պահանջը ենթակա է կատարման այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում: (5) Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ հարգելի ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները: (6) Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելու կամ ապացույց ներկայացնելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դա կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:

Նշված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ օրենսդիրը ամրագրելով կարգապահական վարույթի կողմերի ապացույց ներկայացնելու իրավունքը, նախատեսել է նաև դրա կիրառման կառուցակարգը: Հետևաբար օրենքով սահմանված ժամկետներում ապացույց չներկայացնելու դեպքում հետագայում կողմերը զրկվում են ապացույցներ ներկայացնելու իրավունքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ սահմանել է նոր ժամկետ կամ հարգելի է ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:

Սույն դեպքում Փաստաբանը դիմում չի ներկայացրել փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին:

Նշված «Մասնագիտական եզրակացություն» վերտառությամբ փաստաթղթը ներկայացվել է Խորհրդին, այսինքն Հանձնաժողովը քննարկման առարկա չի դարձրել նշված եզրակացությունը, չի գնահատել նշված ապացույցը և չի դրել իր Որոշման հիմքում: Հետևաբար, Խորհուրդը իրավասու չէ Հանձնաժողովի Որոշման իրավաչափությունը գնահատել նաև այդ ապացույցի համատեքստում:

Միաժամանակ, **Խորհուրդը**, **սույն կարգապահական գործի շրջանակում բարձրացված հարցի կարևորությունը գնահատելով փաստաբանական վարքագծի կանոնների միատեսակ կիրառման**, **փաստաբանի մասնագիտական խոսքի թույլատրելի սահմանների հստակեցման և ապագայում նմանատիպ խախտումների կանխարգելման տեսանկյունից**, **անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքին կից ներկայացված մասնագիտական եզրակացությանը:**

Խորհուրդը շեշտում է, որ նշված անդրադարձը չի հանդիսանում Հանձնաժողովի կողմից չգնահատված նոր ապացույցի հիման վրա գործի վերաքննություն: Դա պայմանավորված է այն անհրաժեշտությամբ, որ փաստաբանների համար հստակ լինի՝ դատավարական փաստաթղթերում օգտագործվող արտահայտությունների թույլատրելիությունը չի որոշվում միայն դրանց լեզվաբանական կամ բառարանային գնահատմամբ: Որոշիչ է նաև այն, թե տվյալ արտահայտությունները համապատասխանո՞ւմ են փաստաբանի մասնագիտական կոռեկտության, զսպվածության և դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունքի պահանջներին:

Խորհուրդն արձանագրում է, որ նշված եզրակացությունը չի կարող կանխորոշել կարգապահական մարմնի իրավական գնահատականը: Փաստաբանի վարքագծի համապատասխանությունը «Փաստաբանության մասին» օրենքին և Փաստաբանի վարքագծի կանոնագրքին գնահատելը կարգապահական մարմնի իրավասությունն է, այլ ոչ թե մասնագետի կամ փորձագետի:

Մասնագիտական եզրակացությունը կարող է վերաբերել օգտագործված բառերի լեզվաբանական նշանակությանը, շարահյուսական կառուցվածքին կամ բառային իմաստին, սակայն այն չի կարող փոխարինել փաստաբանի մասնագիտական վարքագծի իրավական և էթիկական գնահատմանը:

Բողոքաբերի այն պնդումը, թե վիրավորանքի առկայությունը հնարավոր է պարզել միայն փորձագետի կամ մասնագետի եզրակացությամբ, Խորհուրդն ընդունելի չի համարում:

Սույն կարգապահական գործով քննարկման առարկան միայն այն չէ, թե օգտագործված արտահայտությունները լեզվաբանական կամ բառարանային իմաստով հանդիսանում են «վիրավորանք», թե ոչ: Քննարկման առարկան այն է, թե արդյոք դատարան ներկայացված դատավարական փաստաթղթում Փաստաբանի կողմից հակառակ կողմի ներկայացուցչի վերաբերյալ «ստում է», «մեծամիտ և փուչ անձնավորություն է», «իր անգրագիտությունը փորձում է թաքցնել» արտահայտությունների օգտագործումը համատեղելի է փաստաբանի մասնագիտական կոռեկտության, զսպվածության և դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականության հետ:

Այդ հարցի լուծումը չի պահանջում հատուկ գիտելիքներ: Նման արտահայտությունների բնույթը գնահատելի է դրանց սովորական լեզվական նշանակությամբ, օգտագործման համատեքստով և փաստաբանի մասնագիտական վարքագծին առաջադրվող չափանիշների տեսանկյունից:

Նույնիսկ եթե որևէ արտահայտություն լեզվաբանական կամ

քաղաքացիաիրավական իմաստով չի որակվում որպես ուղիղ վիրավորանք, դա ինքնին չի նշանակում, որ այն թույլատրելի է փաստաբանի մասնագիտական վարքագծի կանոնների տեսանկյունից: Փաստաբանի նկատմամբ կիրառվող մասնագիտական չափանիշն ավելի բարձր է, քան միայն իրավական իմաստով «վիրավորանքի» բացակայությունը: Փաստաբանը պարտավոր է դատարան ներկայացվող փաստաթղթերում օգտագործել իրավական, զուսպ և կոռեկտ ձևակերպումներ, իսկ իր քննադատությունը կառուցել հակառակ կողմի փաստարկների, այլ ոչ թե անձի անձնական կամ մասնագիտական արժանիքների գնահատման վրա:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից ներկայացված եզրակացությունը կազմվել է Բողոքաբերի կողմից տրամադրված փաստաթղթերի և առաջադրված հարցերի հիման վրա: Եզրակացության մեջ հիմնականում գնահատվել է, թե արտահայտությունները լեզվաբանական առումով պարունակում են արդյոք վիրավորանք, մինչդեռ կարգապահական գործով որոշիչ է ոչ թե միայն բառերի ձևական կամ լեզվաբանական դասակարգումը, այլ դրանց օգտագործման նպատակը, համատեքստը և մասնագիտական վարքագծի կանոնների հետ համատեղելիությունը:

Բողոքաբերը, հղում կատարելով մասնագիտական եզրակացությանը, ըստ էության փորձում է կարգապահական պատասխանատվության հարցը հանգեցնել միայն «վիրավորանք» հասկացության լեզվաբանական գնահատմանը: Մինչդեռ Կանոնագրքի 4.1 կետի խախտման գնահատման համար անհրաժեշտ չէ, որ արտահայտությունը պարտադիր կերպով որակվի որպես վիրավորանք քաղաքացիաիրավական կամ լեզվաբանական իմաստով: Բավարար է, որ փաստաբանի վարքագիծը դատարանի կամ դատավարության մասնակցի նկատմամբ լինի անհարգալից, ոչ կոռեկտ կամ մասնագիտական վարքագծի պահանջներին չհամապատասխանող:

Փաստաբանի մասնագիտական խոսքը գնահատելիս որոշիչ է ոչ միայն նախադասության քերականական կառուցվածքը, այլև դրա ընդհանուր իմաստը, հասցեատերը, գործածության նպատակը և այն տպավորությունը, որը տվյալ ձևակերպումը թողնում է դատավարության մասնակցի անձի և մասնագիտական արժանապատվության վերաբերյալ:

Այս առումով Խորհուրդը գտնում է, որ մասնագիտական եզրակացությունը չի հերքում Հանձնաժողովի այն հետևությունը, որ Բողոքաբերի կողմից օգտագործված արտահայտությունները եղել են անձին ուղղված, անձնական բնույթի և մասնագիտական բանավեճի սահմաններից դուրս ձևակերպումներ:

Բողոքաբերի դիրքորոշումներից հետևում է նաև, որ վերջինս իր արտահայտությունները պայմանավորել է փաստաբան Կարեն Հովհաննիսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի պատասխանի բովանդակությամբ:

Խորհուրդն արձանագրում է, որ եթե նույնիսկ հակառակ կողմի ներկայացուցչի դատավարական փաստաթուղթը, Բողոքաբերի գնահատմամբ, պարունակել է անհիմն, կամ ոչ կոռեկտ ձևակերպումներ, այդ հանգամանքը չի ազատել Բողոքաբերին սեփական մասնագիտական վարքագծի կանոնները պահպանելու պարտականությունից:

Փաստաբանի պատշաճ արձագանքը պետք է դրսևորվեր իրավական հակափաստարկներով, անհրաժեշտության դեպքում՝ դատավարական միջոցների կիրառմամբ կամ իրավասու մարմնին դիմելով, այլ ոչ թե հակառակ կողմի ներկայացուցչի անձին ուղղված գնահատականներով: Մասնագիտական էթիկայի տեսանկյունից մեկ փաստաբանի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը չի կարող արդարացնել մյուս փաստաբանի կողմից նույնաբնույթ կամ այլ ոչ կոռեկտ վարքագծի դրսևորումը: Յուրաքանչյուր փաստաբան ինքնուրույն է պատասխանատու իր խոսքի, դատավարական փաստաթղթերի բովանդակության և մասնագիտական վարքագծի համար:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Կարգապահական հանձնաժողովը ճիշտ է գնահատել գործի փաստական հանգամանքները և հիմնավոր կերպով արձանագրել, որ փաստաբան Հակոբ Ռոբերտի Ճարոյանի վարքագծում առկա են «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի թիվ ԿԳ- ԿԳ-25091-2-Ա որոշմամբ թույլ չի տրվել որևէ նորմի խախտում, ուստի **<u>Բողոքաբերի փաստարկները հերքվել են Որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով:</u>**

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Բողոքում ներկայացված չէ որևէ հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով Որոշումը վերացնելու համար, ուստի՝ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը**՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի «Փաստաբան Հակոբ Ռոբերտի Ճարոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25091-2-Ա որոշման դեմ Հակոբ Ռոբերտի Ճարոյանի կողմից 14.04.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի թիվ ԿԳ-25091-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Թամարա Բաղդասարյան**

14 մայիսի, 2026թ.
թիվ ԿԳ/09-Ա
ք. Երևան